

**Հարց** Ե՞րբ է ծագում տնտեսական մրցակցությունը:

**Պատասխան** Տնտեսական մրցակցություն ծագում է այն ժամանակ, երբ միևնույն շուկայում իրացվում է միևնույն տեսակի կամ իրենց սպառողական հատկություններով իրար շատ նման արտադրանք: Այդ միասեռ ապրանք արտադրողներից յուրաքանչյուրը կարող է շուկա դուրս բերել այնպիսի քանակությամբ ապրանքներ, որոնք զգալի ազդեցություն կարող են ունենալ շուկայական գնի սահմանման վրա: Այդ պատճառով, շուկայում պետք է բացառվի մենաշնորհների տիրապետությունը, քանի որ նրանք, օգտվելով ապրանքների արտադրության իրենց կարողություններից, կարող են նրանց վրա սահմանել մենաշնորհային գներ, դրանով իսկ խոչընդոտել ազատ մրցակցությանը և հավասարակշռված գների սահմանմանը: